Ասացինք, որ 1872ին մօնօպօլը վերացուեց և արդիւնաբերութիւնը իսկոյն կրկնապատկուեց, բայց այդ աշխատութիւնը պէտք է վերագրել Նօբելեան եղբարց, որք են Ռօբերտ, Լիւդվիգ, Ալֆրեդ և Իմանուէլ, որք գործարան հաստատեցին Բագուի մէջ, որք բարեկարգեցին և հեշտացրին նաւթային գործը զանազան եւրոպական նոր նոր մեքենաներով և գործիքներով։

Վերջապէս Լուդվիգ և Ռօբերտ եղբայրները հիմնեցին Բագուում Նօբէլեան հռչակաւոր տունը և գործարանը։

Եւ միւս գործարանատէրերը հետեւեցին Նօբէլեան սիստէմին, և այժմ մի քանի ցիստերն—նաւեր շրջում են Բագուի, Աստրախանի և Պարսկաստանի միջերքում, և մի քանի ցիստերն — վագոններ Ռուսաստանում և Կովկասում, մանաւանդ երբ Բաթումի երկաթուղու գիծը բացուեց։

Զբաւականանալով այսքանով առաջարկուեց Բագուի և Բաթումի մէջ անցկացնել նաւթանցք, ինչպէս այդ կայ Բալախանի և Բագուի մէջ։ Բագուի և Բաթումի նաւթանցքի ծախքը հաշւում է 900 վերստի համար 60 միլիոն ֆրանք, որ է 20 միլիոն ռուսաց րուբլի դրամ։

Ամենքը ընդունել են, որ ամերիկական նաւթը հանդիպում է առաջին շերտում (teuains pnimaires), մինչդեռ Բագուի նաւթը Ալթալեան Կասպեան կազմուածքեան երրորդ շերտերումն է (eouches tertiaipes). . . . մէջ ու մէջ խփող շատրուանների հորերը, որպէս երեւում է, որոշ դէպքերում գործում են որպէս մէջ ու մէջ (ընդհատուող) ջրի շատրուաններ . . . .

Մեր Կովկասեան ճանապարհորդութիւնից դէս Բագուի շահագործութիւնը և արտահանութիւնը աւելացել է սպասածից վեր. բայց և այնպէս Թուրքեստանի և Մուղանի բոլոր աղբիւրները դեռ եւս մնացել են ձեռք չտուած . . . ևն.

Ֆիրմանալի անգլիական նաւթի մրցումը, որքան էլ նա առատ լինի, ինչպէս պնդում են Լօնդօնում, մեզ չի կարող վրդովեցնել և ոչ ամերիկականը սարսափեցնել»։

Կերոսինի առաջին գործարանը հիմնուեց Բագուում 1859 թ. 1880—1885. հնգամեայ շրջանում Բագուի նաւթի արդիւնաբերութիւնն էր 324 միլիոն պուդ, իսկ 1886 – 1890 թուականների